ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE4A-DD96-4ABE-AC1F հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/0451/02/26 քաղաք Երևան
30 Հունվարի 2026թ

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Մխեյանի, քննության առնելով ԵԴ2/0451/02/26 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑ

«Վոլտ Ամպեր» ՍՊԸ-ն՝ ի դեմս ներկայացուցիչ Արմեն Մուրադյանի, հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, երրորդ անձ «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի՝ հայցելով

- անվավեր ճանաչել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի թիվ 3 հիմնական դպրոցի» վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՏԶՀ-ԴՎՀԲՄԱԾՁԲ-2025/51 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 5.1 կետով «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և

մերժելու մասին որոշումը:
- պարտավորեցնել «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի թիվ 3 հիմնական դպրոցի» վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՏՁՀ-ԴՎՀԲՄԱԾՁԲ-2025/51 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին վերագնահատել «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ-ի հայտը:
- պարտավորեցնել «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի թիվ 3 հիմնական դպրոցի» վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՏՁՀ-ԴՎՀԲՄԱԾՁԲ-2025/51 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին անբավարար գնահատել և մերժել «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ-ի հայտը՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից տրամադրված թիվ 224640999506/19 բանկային երաշխիքը ՀՏՁՀ-ԴՎՀԲՄԱԾՁԲ-2025/51 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:
Դատարանը 21.01.2026 թվականին կայացրել է որոշում հայցադիմումը վերադարձնելու մասին:
Հայցվորը հայցադիմումը կրկին 22.01.2026 թվականին ներկայացրել է դատարան:
Կրկին ներկայացված հայցադիմումով հայցվորը հայցել է՝
- Անվավեր ճանաչել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի թիվ 3 հիմնական դպրոցի» վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՏՁՀ-ԴՎՀԲՄԱԾՁԲ-2025/51 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 5.1 կետով «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:
- Պարտավորեցնել «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի թիվ 3 հիմնական դպրոցի» վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՏՁՀ-ԴՎՀԲՄԱԾՁԲ-2025/51 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին անբավարար գնահատել և մերժել «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ-ի հայտը՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸի կողմից տրամադրված թիվ 22 46 40 999506/19 բանկային երաշխիքը ՀՏՁՀ-ԴՎՀԲՄԱԾՁԲ-2025/51 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:
Դատարանն արձանագրում է, որ կրկին ներկայացված հայցադիմումով փոփոխվել է հայցի առարկան, ինչի արդյունքում Դատարանը հայցադիմումը գնահատում է նոր ներկայացված և արձանագրում, որ հայցադիմումը

ներկայացված է ՔԴՕ 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան և բացակայում են ՔԴՕ 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:
Դատարանն արձանագրում է, որ ներկայացված հայցը ենթակա է քննության ՔԴՕ 27.2 գլխի կանոններով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՔԴՕ 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է պատասխանող Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Պատասխանող Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Պարզաբանել կողմերին, որ՝
- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.
- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:
- հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
- գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:
- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:
4. Եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր սահմանել 27.02.2026 թվականին:
5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by MKHEYAN DANIEL 2908790114
Date: 2026.01.30 11:25:28 AMT

Դատավոր՝ Դանիել Մխեյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am